

**Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2010-15թթ. ուսանողական հարցման մասնաճյուղում մշակված արդյունքների վերլուծության**

**Հաշվետվություն**

**11.07.2015թ.**

Ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության կարևորագույն գործոններից մեկը ֆակուլտետ-ուսանող, դասախոս-ուսանող հարաբերություններում հետադարձ կապի ապահովումն է: Տվյալ նպատակի իրագործման ուղղությամբ վերջին տարիներին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ավանդույթ է դարձել յուրաքանչյուր կիսամյակի վերջում ֆակուլտետի ղեկավարության, դասախոսների որակների վերաբերյալ ուսանողների շրջանում հարցումների անցկացումը: Մայր բուհում մշակված և կանոնակարգված հարցաշարի օգնությամբ ուսանողները, յուրաքանչյուր կիսամյակի համար գնահատում են դասավանդող դասախոսների մասնագիտական, մանկավարժական և անձնային որակները, ֆակուլտետների ղեկավարության գործունեությունից իրենց բավարարվածության աստիճանը: Հարցումներին մասնակցել են ուսանողության գերակշիռ մասը: Հարցաթերթիկը չեն լրացրել միայն այն քիչ ուսանողները, ովքեր այդ օրը տարբեր պատճառներով բացակայել են: Այնպես որ կարելի է հարցումները համարել համատարած, հետևաբար ներկայացուցչության խնդիր չի դրվում: Ստացված տվյալները թույլ են տալիս որոշակի դատողություններ անել նաև ամբիոնների գործունեության արդյունավետության վերաբերյալ:

Այս հարցման տվյալները մշակվում են ԵՊՀ-ում և ուղարկվում մասնաճյուղ, սակայն մասնաճյուղում այդ ամփոփված տվյալների հիման վրա, անհրաժեշտ որոշ ցուցիչների ամփոփ ներկայացման և գնահատման համար, 2014-15 ուստարում գրվել է համապատասխան տեղեկատվական համակարգ՝ բազա, և իրականացվել են անհրաժեշտ վերլուծություններ:

Բերենք 2010-11 ուստարվանից մինչև 2014-15 ուստարիներն անցկացված հարցումների համակարգված արդյունքները: Դասախոսների որակները գնահատվել են 5 բալանի սանդղակով, որտեղ 1-ը ամենացածր գնահատականն է, իսկը 5-ը՝ ամենաբարձր:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների վերաբերյալ ուսանողական հարցման միջինացված գնահատականները բերված են աղյուսակ 1-ում:

Ինչպես տեսնում ենք բոլոր տարիների կտրվածքով դասախոսների որակները ստացել են բարձր գնահատականներ՝ 4,54-4,60: Սա վկայությունն է այն ճշմարտության, որ ընդհանուր առմամբ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դասախոսական կազմն օժտված է մանկավարժական, մասնագիտական և անձնային պատշաճ որակներով:

Առանձին որակների գնահատականների գնումը ցույց է տալիս, որ համեմատաբար ամենացածր գնահատականները ստացվել են 2010-11 ուստարվա երկրորդ կիսամյակում՝ 4,42-4,49: 4,42 գնահատականը միջինացված բոլոր գնահատականների մեջ ամենացածրն է և վերաբերում է դասընթացի նյութը յուրացնելու հարցում դասախոսի իրական աջակցությանը: Թերևս սա առնչվում է դասախոսների արտալսարանային խորհրդատվությունների, դասախոս-ուսանող հարաբերություններում ոչ պաշտոնական հաղորդակցությունների մակարդակի,

ձևավորված մշակույթի հետ: Ասվածի ապացույցն է նաև այն, որ լսարանից դուրս դասընթացին առնչվող հարցերով դասախոսի հետ հաղորդակցվելու հնարավորությունների գնահատականը նույնպես ամենաբարձրը չէ՝ 4,48: Այստեղ կարևոր է հաշվի առնել մի հանգամանք, այն, որ մասնաճյուղի դասախոսների մի ստվար մասը որոշակի օրերին ժամանում է մայրաքաղաքից, բուհում լինում է քիչ օրեր, ինչը օբյեկտիվորեն և էականորեն նվազեցնում է արտալսարանային հաղորդակցությունների հնարավորությունները:

Տվյալների մեջ 2010-12 թթ. կատարած հարցումներում առաջին կիսամյակի հանդեպ նկատելի է նաև երկրորդ կիսամյակի գնահատականների փոքր ինչ նվազեցման միտումը: Օրինակ 2010-11 ուստարում, աղյուսակ 1-ում բերված բոլոր 6 ցուցանիշներով առաջին կիսամյակի գնահատականները ավելի բարձր են: Թեպետ տարբերությունը ավելի քիչ է, սակայն նույն միտումն է նաև 2011-12 ուստարում: Առանձնագրույցների ընթացքում պարզեցինք, որ իրենք, դասախոսները ավելի շատ դա պայմանավորում էին երկրորդ կիսամյակում առաջինի համեմատ որոշակի հոգնածությամբ: «Արձակուրդային հանգիստը, ուժերի վերականգնումը թույլ է տալիս առաջին կիսամյակի ընթացքում ավելի «թարմ» լինել, ավելի լիարժեք կատարել դասախոսական պարտականությունները, մինչդեռ գարնանը, 7-8 ամսվա հոգնածությունը, հոգեբարոյական լարվածությունը, հատկապես կապված աշնանային քննաշրջանի գործընթացների հետ բառացիորեն «հյուծում է» շատ գործընկերների»,- պատճառաբանում էին մեր զրուցակիցները: Այդուհանդերձ ճշմարտություն է նաև այն, որ ուսանողների համեմատ ավելի գիտակից ու հասուն դասախոսական կազմը պետք է լրացուցիչ ներքին ռեսուրսներ որոնի և գտնի ուսումնական ողջ տարվա ընթացքում աշխատանքային պարտականությունները լիարժեքորեն կատարելու համար: Թերևս նման փաստարկի դեմ դժվար է առարկելը և շատերը համաձայնվում էին և հույս տալիս, որ հաջորդ կիսամյակներում փորձելու են «ուղղվել»: Որ վիճակագրորեն դասախոսական կազմը «խոստումը կատարել է», վկայում են հաջորդ երկու տարվա տվյալները: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ում, 2012-13 և 2013-14 ուստարիներում կիսամյակների գնահատումներում որակական տարբերությունը գրեթե բացակայում է:

Տվյալները տարիների կտրվածքով դիտարկելիս նկատելի է մի շարք որակների գծով առաջընթացը, ինչը թերևս հարցումների արդյունքները համապատասխան ստորաբաժանումների պատասխանատուների և դասախոսների հետ պարբերական քննարկումների և կատարվող հետևությունների հետ հաշվի նստելու արդյունք է: Դա առաջին հերթին վերաբերվում է ժամանակը լսարանում արդյունավետ օգտագործելուն /4,45՝ 2010-11 ուստարում և 4,69՝ 2014-15 ուստարում/, ինչպես նաև նյութի մատուցման պարզությանը, մատչելիությանն ու ըմբռնելիությանը /4,45 և 4,64 համապատասխանաբար/, դասընթացի նյութի յուրացմանը աջակցելուն /4,42 և 4,61 համապատասխանաբար/: Թեկուզև համեմատաբար պակաս, բայց առաջընթացը նկատելի է նաև ուսանողների ինքնուրույն աշխատանքը խրախուսելուն /4,49 և 4,65/, արտալսարանային շփումներին /4,48 և 4,63/:

Աղյուսակ 2-ում բերված են տարբեր ֆակուլտետների, դրանց ղեկավարության, գործավարների գործունեության գնահատականները: Նշենք, որ տրված են ղեկանների և իրենց տեղակալների միջինացված ընդհանուր գնահատականը: Այստեղ ևս մասնաճյուղի մասշտաբով գնահատման 5-բալանոց սանդղակի շրջանակներում ֆակուլտետների գործունեությանը տրված են բավական բարձր գնահատականներ: Օրինակ 2013-14 ուստարվա համար ֆակուլտետի

գնահատականները տատանվում են 4,46-4,75 շրջանակում, դեկանի և նրա տեղակալինը՝ 4,65-4,89-ում, գործավարինը՝ 4,63-4,85-ում: 2014-15 ուստարում այդ գնահատականներն են՝ 4,56-4,78, 4,84-4,95 և 4,83-4,99՝ համապատասխանաբար: Սա ևս խոսում է այն մասին, որ հիմնականում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսումնական ստորաբաժանումները պատշաճորեն են կատարում ուսման կազմակերպման, որակյալ մասնագետների թողարկման իրենց պարտավորությունները:

Բնական է, որ ուսանող երիտասարդի գիտակցության մեջ ֆակուլտետի վերաբերյալ ընդհանուր գնահատականը ձևավորվում է որպես տվյալ ֆակուլտետի դասախոսների, թողարկող ամբիոնի անձնակազմի, դեկանատի գործունեության, ընդհանրապես ուսանողության ու դասախոսների «անցուղարձի», սպասարկող անձնակազմի գործունեության գնահատականների յուրովի գումար: Այնպես որ, հավաստի գնահատումներում ֆակուլտետի գնահատականը կարող է որակապես տարբերվել նրա անմիջական ղեկավարության գործունեության գնահատականներից: Ասվածի յուրովի ապացույց են նաև աղյուսակ 2-ում բերված տվյալները: Օրինակ, հետազոտված բոլոր տարիների ընթացքում տեսնում ենք, որ ֆակուլտետի ընդհանուր գնահատականը՝ /4,39-4,56/ որակապես զիջում է դեկանատի գործունեության գնահատականներին՝ /4,80-4,97/: Հումանիտար գիտությունների և տնտեսագիտության ֆակուլտետներում բնագիտականի համեմատ պակաս, սակայն նույնպես ֆակուլտետին տրված ընդհանրական գնահատականը ավելի ցածր է, քան դեկանատի գործունեությանը: Կիրառական արվեստի ֆակուլտետում հակառակը, 2010-13 ուստարիներին ֆակուլտետի ընդհանուր գնահատականը որակապես ավելի բարձր է՝ /4,45-4,64/ քան դեկանատի գործունեության գնահատականը /4,10-4,36/: 2014-15 ուստարվա գնահատականները արդեն «նման են» մնացած ֆակուլտետների գնահատականներին:

Դասախոսների գնահատականների հիման վրա «դուրս բերված» առանձին ամբիոնների ընդհանրական գնահատականները /տես աղյուսակ 3/ ևս անուղղակիորեն հիմնավորում են մեր դատողությունները: Օրինակ, Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնին տրված համեմատաբար ցածր գնահատականները՝ /4,02-4,41, միջին գնահատականը՝ 4,25/ հենց այն հոգեբանական «ուժն» է, որը «ստիպել» է ուսանողներին ողջ ֆակուլտետին գնահատել ավելի ցածր, քան դեկանատի ղեկավարությանը և գործավարին, որոնց հետ ձևավորված են դրական պաշտոնական ու ոչ պաշտոնական հարաբերություններ: Իսկ ահա Կիրառական արվեստի ֆակուլտետի ամբիոններին՝ «Գծանկարի, գունանկարի և քանդակի», «Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի», տրված համեմատաբար բարձր գնահատականները /միջին գնահատականները 4,67 և 4,54՝ համապատասխանաբար/ հոգեբանական հիմք են հանդիսացել ֆակուլտետի ընդհանուր գնահատականը համարել ավելի բարձր, քան դեկանատի ղեկավարության ու գործավարի գործունեությունը, որոնց հետ ուսանողության որոշ մասի պաշտոնական և ոչ պաշտոնական հարաբերություններում, ամենայն հավանականությամբ այդ տարիներին եղել է բարոյա-հոգեբանական որոշակի լարվածություն, ինչը «շտկվել» է հաջորդ կիսամյակներում:

Ընդհանրացնելով նախ կարող ենք փաստել, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանող երիտասարդության գիտակցության մեջ բուռն, որտեղ իրենք սովորում են, տարիների ընթացքում ձեռք են բերում գիտելիքներ ու մասնագիտական հմտություններ, սպասարկում են պատշաճ որակի դասախոսական կազմ և ուսումնական ստորաբաժանումներ՝ ֆակուլտետների և

ամբիոնների տեսքով: Առանձին դասախոսների և ստորաբաժանումների համեմատաբար ցածր գնահատականները պահանջում են պատճառների և գործոնների ավելի խորը վերլուծություն, ինչը հիմք է հետագա ուսումնասիրությունների համար:

Նմանօրինակ հարցումների ավանդույթը մայր բուհում և մասնաճյուղում ունի ոչ երկար պատմություն: Դեռևս չի ձևավորվել քաղաքացիական ազատությունների գիտակցման այն մշակույթը, որը ուսանող երիտասարդության գերակշիռ մասին խթանի պատշաճ խորությամբ ըմբռնել սեփական պաշտոնական և ոչ պաշտոնական հարաբերությունների բնույթն ու բովանդակությունը: Չկա նաև բնական համարձակության այն չափը, որը անհրաժեշտության դեպքում երիտասարդին ստիպի այդ հարաբերությունների մասին ազատորեն ու անկաշկանդ, բարձրաձայն և ի լուր կարծիք հայտնել ու գնահատել: Իներցիայով բարոյա-հոգեբանական կաշկանդվածության ուժը դեռևս բավականին մեծ է, ինչը թերևս ժառանգված է նախորդ հասարակական հարաբերություններից:

Այդուհանդերձ, կրթական գործընթացների արդյունավետության բարձրացման հիմնախնդրի լուծման մեջ սուբյեկտիվ վիճակագրության դրական դերը կասկած չի հարուցում: Ակնհայտ է, որ սեփական ուսանողների կողմից իրենց մանկավարժական, մասնագիտական, անձնային որակների գնահատման փաստը արդեն յուրովի «դասախոսներին ձգում է», պահում է անհրաժեշտ լարվածության մեջ, ստիպում է ավելի հաճախ դիմել սեփական ինքնագիտակցությանը, կատարել ինքնավերլուծություն, «հաճույքով զբաղվել» ինքնաքննադատությամբ: Այն, ինչը ինքնագարգացման, հետևաբար և սեփական գործունեության կատարելագործման գրավականն է:

Մյուս կողմից, սույն հարցումների առնչությամբ մասնաճյուղն ունի յուրահատկություն: Այն առումով, որ դասախոսական անձնակազմը մայրաքաղաքի բուհերի համեմատ ավելի շարժուն է, փոփոխվող, արագ նորացվող: Հետևաբար, կա մարզային, այն էլ սահմանամերձ պայմաններին ու յուրօրինակություններին հարմարվելու լրացուցիչ խնդիր: Մի բան է հանրապետության «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակում, զինադադարի պայմաններում մայրաքաղաքի հարաբերականորեն հանգիստ մթնոլորտը, բոլորովին այլ՝ սահմանամերձ Տավուշի մարզի, մարզկենտրոնում գտնվող բուհի միջավայրը, որտեղ սովորում են պարբերաբար հակառակորդի կողմից ուբակոծվող սահմանամերձ գյուղերի տղաներն ու աղջիկները: Փաստ, որը թերևս ավելի է կարևորում սեփական գործունեության, հարաբերությունների վերաբերյալ սոցիալական միջավայրի, իրենց իսկ՝ ուսանողների գնահատականների իմացությունը, այն, ինչը կօժանդակի ավելի արագ և օպտիմալ ժամկետներում հարմարվել ու կատարելագործվել:

Նմանօրինակ հարցումների արդյունավետության բարձրացման նպատակով ***առաջարկվում է.***

1. Հատուկ ուշադրություն դարձնել ստացված տվյալների հավաստիության խնդրին: Դրա համար յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հարկավոր է. ա/ գնահատել ՀՀ ԿԳ Նախարարության կողմից հաստատված և մայր բուհի կողմից տեղայնացված կանոնակարգի պահանջներին մասնաճյուղի ուժերով անցկացված հարցման համապատասխանությունը; բ/ առանձնակի կարևորել մինչև հարցումը մասնագետների կողմից անցկացվող նախապատրաստական աշխատանքները, այն ամենը, ինչը կարող է օժանդակել հարցվողների անկեղծ, չթելադրված պատասխաններին;

2. Պահպանելով անհրաժեշտ «կոնֆիդենցիալությունը», ստացված տվյալները պարտադիր քննարկման առարկա դարձնել գնահատվող անձանց, ստորաբաժանումների և պատասխանատուների շրջանում: Ըստ այդ այստեղ հույժ կարևոր է առանձնակի էթիկայի կանոնների պահպանումը՝ հատկապես արդյունքների վերաբերյալ որակումների ձևակերպումներում;
3. Ընդունելի ժամկետներում պարբերաբար անդրադառնալ գնահատվողների կողմից դիտողությունները հաշվի առնելու և ստացված արդյունքների խնդրին:

Աղյուսակ 1. Դասավանդման և ուսումնառության մեթոդների վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքները

Թիվ	Հարցի բովանդակությունը	Ընդ. միջ. գնահ.	2010-11		2011-12		2012-13		2013-14		2014-15	Min	Max
			1-ին կիս	2-րդ կիս	1-ին կիս	2-րդ կիս	1-ին կիս	2-րդ կիս	1-ին կիս	2-րդ կիս	1-ին կիս		
4	Նյութը մատուցում էր պարզ, հասկանալի և մատչելի	4,55	4,53	4,45	4,56	4,48	4,53	4,57	4,59	4,63	4,64	4,45	4,64
5	Օժանդակում էր դասընթացի նյութը յուրացնելուն	4,54	4,51	4,42	4,56	4,51	4,55	4,57	4,59	4,61		4,42	4,61
6	Ժամանակը լսարանում արդյունավետ էր օգտագործում	4,58	4,54	4,45	4,58	4,51	4,59	4,59	4,61	4,62	4,69	4,45	4,69
7	Հետևում էր լսարանի արձագանքին	4,57	4,54	4,46	4,59	4,54	4,59	4,60	4,59	4,64	4,61	4,46	4,64
8	Ուսանողներին հնարավորություն էր տալիս իրեն դիմել լսարանից դուրս՝ դասընթացին առնչվող հարցերով	4,57	4,56	4,48	4,59	4,55	4,59	4,63	4,62	4,61	4,54	4,48	4,63
9	Խրախուսում էր ուսանողների ինքնուրույն աշխատանքը	4,60	4,55	4,49	4,60	4,56	4,65	4,65	4,64	4,65		4,49	4,65

Աղյուսակ 2. Ֆակուլտետի, ֆակուլտետի ղեկանի և տեղակալի ու գործավարի միջին գնահատականները

Ֆակուլտետի անունը	2010-11 ուստարի			2011-12 ուստարի			2012-13 ուստարի			2013-14 ուստարի			2014-15 ուստարի 1-ին կիս.		
	ֆակ.	ղեկան	գործ.	ֆակ.	ղեկան	գործ.	ֆակ.	ղեկան	գործ.	ֆակ.	ղեկան	գործ.	ֆակ.	ղեկան	գործ.
Բնական գիտությունների	4,41	4,97	4,80	4,40	4,85	4,83	4,39	4,87	4,84	4,46	4,89	4,75	4,56	4,91	4,83
Կիրառական արվեստի	4,61	4,27	4,15	4,45	4,18	4,10	4,64	4,23	4,36	4,75	4,65	4,63	4,78	4,95	4,88
Հումանիտար գիտությունների	4,49	4,66	4,58	4,57	4,65	4,63	4,63	4,68	4,41	4,58	4,79	4,78	4,58	4,84	4,83
Տնտեսագիտության	4,59	4,89	4,86	4,58	4,91	4,90	4,60	4,65	4,78	4,62	4,74	4,85	4,73	4,85	4,99
<i>Փոքրագույն գնահատականը</i>	<i>4,41</i>	<i>4,27</i>	<i>4,15</i>	<i>4,40</i>	<i>4,18</i>	<i>4,10</i>	<i>4,39</i>	<i>4,23</i>	<i>4,36</i>	<i>4,46</i>	<i>4,65</i>	<i>4,63</i>	<i>4,56</i>	<i>4,84</i>	<i>4,83</i>
<i>Մեծագույն գնահատականը</i>	<i>4,61</i>	<i>4,97</i>	<i>4,86</i>	<i>4,58</i>	<i>4,91</i>	<i>4,90</i>	<i>4,64</i>	<i>4,87</i>	<i>4,84</i>	<i>4,75</i>	<i>4,89</i>	<i>4,85</i>	<i>4,78</i>	<i>4,95</i>	<i>4,99</i>

**Աղյուսակ 3. ԵՊՀ ԻՄ ամբիոնների միջին գնահատականներն ըստ ուստարիների**

Ամբիոնի անունը	Միջին գնահ.	2010-11 ուստարի		2011-12 ուստարի		2012-13 ուստարի		2013-14 ուստարի		2014-15 ուստ.	Փոքրագույն և մեծագույն գնահ.	
		1-ին կիս	2-րդ կիս	1-ին կիս	2-րդ կիս	1-ին կիս	2-րդ կիս	1-ին կիս	2-րդ կիս	1-ին կիս	Min	Max
Անտառագիտության	4,55	4,57	4,58	4,5	4,38	4,64	4,45	4,63	4,66		4,38	4,66
Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի	4,25	4,24	4,24	4,23	4,09	4,47	4,02	4,41	4,34		4,02	4,47
Գծանկարի, գունանկարի և քանդակի	4,67	4,67	4,55	4,58	4,58	4,64	4,7	4,85	4,82	4,80	4,55	4,85
Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի	4,54	4,67	4,54	4,26	4,35	4,62	4,61	4,68	4,61	4,76	4,26	4,68
Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության	4,59									4,59	4,59	4,59
Ընդհանուր տնտեսագիտության	4,55	4,56	4,55	4,57	4,59	4,53	4,63	4,47	4,53	4,66	4,47	4,66
Ընդհանուր ֆիզիկայի	4,50	4,53	4,5	4,6	4,56	4,49	4,36	4,44	4,55		4,36	4,6
Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների	4,52									4,52	4,52	4,52
Հայոց լեզվի և գրականության	4,51	4,57	4,53	4,49	4,42	4,51	4,46	4,59	4,5	4,66	4,42	4,66
Մանկավարժության և հոգեբանության	4,64	4,51	4,53	4,56	4,72	4,71	4,51	4,8	4,78	4,69	4,51	4,8
Պատմության և քաղաքագիտության	4,51	4,51	4,38	4,56	4,56	4,52	4,54	4,53	4,46	4,56	4,38	4,56
Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	4,63	4,75	4,51	4,65	4,47	4,69	4,51	4,66	4,76	4,83	4,47	4,83
Օտար լեզուների	4,57	4,54	4,39	4,74	4,48	4,61	4,58	4,66	4,6	4,48	4,39	4,74
<b>Մասնաճյուղի միջին գնահատականը</b>	<b>4,54</b>	<b>4,56</b>	<b>4,48</b>	<b>4,52</b>	<b>4,47</b>	<b>4,58</b>	<b>4,49</b>	<b>4,61</b>	<b>4,60</b>	<b>4,66</b>		
Փոքրագույն գնահատականը	4,25	4,24	4,24	4,23	4,09	4,47	4,02	4,41	4,34	4,48		
Մեծագույն գնահատականը	4,67	4,75	4,58	4,74	4,72	4,71	4,70	4,85	4,82	4,83		

*Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին*